2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		145,000.0	45,500.0	99,500.0
				այդ թվում՝				
				1. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում		10,000.0	10,000.0	-
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	10,000.0	10,000.0	-
				2. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում		12,500.0	-	12,500.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	12,500.0	-	12,500.0

Տրոհ NN	Բաժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գործակալ NN	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆունդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<u>3. Բակալին տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում</u>		90,000.0	3,000.0	87,000.0
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	3,000.0	3,000.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	82,000.0	-	82,000.0
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	5,000.0	-	5,000.0
				<u>4. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ</u>		32,500.0	32,500.0	-
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	22,500.0	22,500.0	-
				- Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	10,000.0	10,000.0	-
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ		57,295.0	57,295.0	-
				այդ թվում՝				
2810	08	1	0	<u>Հանգստի և սպորտի ծառայություններ</u>		3,635.0	3,635.0	-
				որից՝				
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ		3,635.0	3,635.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Սպորտային միջոցառումների կազմակերպում</u>		3,635.0	3,635.0	-
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	3,635.0	3,635.0	-
2820	08	2	0	<u>Մշակութային ծառայություններ</u>		53,660.0	53,660.0	-
				որից՝				
2821	08	2	1	Գրադարաններ		26,229.8	26,229.8	-
				այդ թվում՝				
				<u>1. Գրադարանային ծառայություններ</u>		26,229.8	26,229.8	-
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	26,229.8	26,229.8	-
2823	08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ		15,623.2	15,623.2	-
				այդ թվում՝				
				<u>1. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում</u>		15,623.2	15,623.2	-
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	15,623.2	15,623.2	-
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ		11,807.0	11,807.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Մշակութային միջոցառումների իրականացում</u>		11,807.0	11,807.0	-

Տրոհ MIN	Բաժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գումար NN	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	11,807.0	11,807.0	-
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ		745,671.3	745,671.3	-
				այդ թվում՝				
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն		529,566.0	529,566.0	-
				որից՝				
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն		529,566.0	529,566.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Նախադպրոցական ուսուցում</u>		529,566.0	529,566.0	-
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	529,566.0	529,566.0	-
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն		213,105.3	213,105.3	-
				որից՝				
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		213,105.3	213,105.3	-
				այդ թվում՝				
				<u>1. Արտադպրոցական դաստիարակություն</u>		213,105.3	213,105.3	-
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	213,105.3	213,105.3	-
2960	09	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		3,000.0	3,000.0	-
				որից՝				
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		3,000.0	3,000.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում</u>		3,000.0	3,000.0	-
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	3,000.0	3,000.0	-
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ		66,433.9	66,433.9	-
				այդ թվում՝				
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		33,605.0	33,605.0	-
				որից՝				
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		33,605.0	33,605.0	-
				այդ թվում՝				
				<u>1. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում</u>		1,900.0	1,900.0	-

Տրոհ ՄԱՆ	Բաժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գումար ՄԱՆ	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1,900.0	1,900.0	-
				<u>2. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում</u>		1,500.0	1,500.0	-
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1,500.0	1,500.0	-
				<u>3. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օտերին աջակցություն</u>		17,905.0	17,905.0	-
				- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	1,500.0	1,500.0	-
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	3,405.0	3,405.0	-
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	11,010.0	11,010.0	-
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	1,990.0	1,990.0	-
				<u>4. Սոցիալապես անապահով անձանց աջակցություն</u>		3,800.0	3,800.0	-
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1,800.0	1,800.0	-
				- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	2,000.0	2,000.0	-
				<u>5. Հասարակական կազմակերպություններին աջակցություն</u>		8,500.0	8,500.0	-
				- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	8,500.0	8,500.0	-
3090	10	9	0	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		32,828.9	32,828.9	-
				որից՝				
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		24,768.9	24,768.9	-
				այդ թվում՝				
				<u>1. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>		24,768.9	24,768.9	-
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	23,587.3	23,587.3	-
				- Էներգետիկ ծառայություններ	4212	397.6	397.6	-
				- Կապի ծառայություններ	4214	403.4	403.4	-
				- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	380.6	380.6	-
3092	10	9	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		8,060.0	8,060.0	-
				այդ թվում՝				
				<u>2. Առողջության ապահովագրություն</u>		8,060.0	8,060.0	-
				- Ապահովագրական ծախսեր	4215	8,060.0	8,060.0	-

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

2015 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ՄԱՍ I

Երևանի քաղաքապետի զեկույցը 2015 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հաշվի առնելով Երևան քաղաքի զարգացման 2014-2017 թվականների քառամյա ծրագրով նախատեսված գերակայությունները և առկա ռեսուրսները, ընթացիկ տարում իրականացված ծրագրերի արդյունավետությունն ու դրանց զարգացման միտումները, հիմք ընդունելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, 2015 թվականին քաղաքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են լինելու Երևանի տարածքային համաչափ, կայուն զարգացմանն ու պլանավորմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներից բխող՝ Երևանի բնակչության պաշտպանության և անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովմանը, մայրաքաղաքի բարեկեցիկ ու հարմարավետ միջավայրի ձևավորմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև գլխավոր հատակագծին համահունչ քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Երևան քաղաքի զարգացումը 2015 թվականին խարսխվելու է սոցիալական, մշակութային, բարեկարգման, կանաչապատման և քաղաքի կայուն ու նպատակային առաջընթացն ապահովող այլ կարևոր ուղղությունների արդյունավետ լուծմանն ուղղված քայլերի հետևողական իրագործման հենքի վրա, որոնց ապահովման նպատակով առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Երևանի տարածքային համաչափ, կայուն զարգացման և պլանավորման ապահովումը,
2. նպատակային տնտեսական և սոցիալական քաղաքականության վարման միջոցով տնտեսական և քաղաքացիական կյանքին բնակչության անմիջական մասնակցության խթանումը,
3. ներդաշնակ կենսատարածքի ձևավորումը և բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը նպաստումը,

4. հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը,
5. շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, անվտանգ տեղաշարժի ապահովումը,
6. մայրաքաղաքի արտաքին ձևավորումը, ներառյալ շենքերի արտաքին տեսքի կարգաբերումը,
7. առանձնահատուկ կարիք ունեցող քաղաքացիների համար քաղաքային առօրյան ավելի մատչելի դարձնելու մարդասիրական ծրագրի հետևողական իրագործումը,
8. գովազդատեղեկատվական համակարգի կատարելագործման միջոցով զբոսաշրջության զարգացմանը խթանող քաղաքականության իրականացումը,
9. կառավարման համակարգի բարեփոխումների և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը՝ այդ նպատակով իրավական դաշտի կատարելագործումը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը, հաղորդակցության ժամանակակից միջոցների կիրառումը և բնակչի հետ հետադարձ կապի ակտիվացումը,
10. կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության, իսկ դրանցից ոմանց պարագայում (գրադարաններ, մշակույթի տներ և արվեստի կենտրոններ) ամբողջական հիմնանորոգման աշխատանքների ավարտի ապահովումը.
11. առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը, բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակական բարելավման նպատակով՝ քաղաքապետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունները ժամանակակից բուժսարքավորումներով համալրելու գործընթացին աջակցումը,
12. մշակութային ժառանգության պահպանությունը, առողջ ապրելակերպի խրախուսումը՝ այդ նպատակով նպաստավոր պայմանների ստեղծումը,
13. Երևան քաղաքում հաշվառված չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների համար բնակարաններ ձեռք բերելու և նրանց նոր բնակարաններով ապահովելու գործընթացի ավարտական փուլի իրականացումը,

14. վթարայնության աստիճան ունեցող շենքերի հետազոտման շարունակականության ապահովումը,
15. երեխաների իրավունքների պաշտպանությունը և անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը,
16. բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումը և այդ նպատակով հաշմանդամների, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի իրագործումը,
17. մայրաքաղաքի բնապահպանական իրավիճակի բազմակողմ ու համակարգված բարելավումը,
18. աղբահանության և սանմաքրման աշխատանքների բարելավումն ու արդիականացման գործնական աշխատանքների կազմակերպման ապահովումը.
19. գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցությանը միտված ավանդույթների ձևավորումը և խթանումը:
20. հասարակական տրանսպորտի գործունեության կանոնակարգմանը միտված ծրագրերի մշակման և դրանց ներդրման հնարավորությունների ուսումնասիրման ապահովումը,
21. Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և սպասարկման որակի բարելավումը,
22. բնակչության անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովումը,
23. միջազգային համագործակցության ընդլայնումը, քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունն ու կիրառումը:

ՄԱՍ II

Բացատրագիր-Հիմնավորում Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծի

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունն ու հստակությունը:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

եկամուտների գծով՝ 71,870,838.3 հազ. դրամ,

ծախսերի գծով՝ 72,120,838.3 հազ. դրամ,

դեֆիցիտը (պակասուրդը) 250,000.0 հազ. դրամ:

1. Եկամուտների կանխատեսում.

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է **71,870,838.3** հազ. դրամի չափով Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեով ի սկզբանե հաստատված **69,091,815.9** հազ. դրամի դիմաց՝ 2,779,022.4 հազ. դրամով կամ շուրջ 4%-ով ավել:

Նախագծով նախատեսված եկամուտները ավել են 2013 թվականի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտներից 8,202,913.1 հազ. դրամի կամ 12.9%-ի չափով: Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 20,020,911.5 հազ. դրամ՝ 2014 թվականի նախատեսված (ճշտված) 19,433,799.1 հազ. դրամի դիմաց և ծրագրվել են 587,112.4 հազար դրամով կամ 3%-ով ավել: Նախագծով սեփական եկամուտների նախատեսված ցուցանիշը ավել

է 2013 թվականի սեփական եկամուտների փաստացի կատարողականից 3,016,964.9 հազար դրամով կամ 17.7%-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները և տուրքերը 2015 թվականի համար բյուջեի նախագծով ծրագրվել են 14,182,961.1 հազ. դրամ՝ ընթացիկ տարվա ճշտված 13,832,511.1 հազ. դրամի դիմաց կամ շուրջ 2.5%-ով ավել, ինչն ավել է նաև 2013 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից 2,178,553.8 հազ. դրամով կամ շուրջ 18.2%-ով:

ա. Հարկային եկամուտները ծրագրվել են 10,348,274.1 հազ. դրամի չափով կամ 2014 թվականի համար հաստատված (ճշտված) ցուցանիշից 362,673.0 հազ. դրամով կամ շուրջ 3.6%-ով ավել, ինչն իր հերթին ավել է 2013 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից 1,398,350.3 հազ. դրամով կամ շուրջ 15.6%-ով, որից.

- գույքահարկը նախագծով նախատեսվել է 9,701,907.6 հազ. դրամ կամ 2014 թվականի համար հաստատված (ճշտված) ցուցանիշից 386,038.5 հազ. դրամով կամ շուրջ 4.1%-ով ավել, իսկ 2013 թվականի փաստացի ցուցանիշից 1,349,748.5 հազ. դրամով կամ շուրջ 16,2%-ով ավել,
- հողի հարկը ծրագրվել է 646,366.5 հազ. դրամ՝ 2014 թվականին ծրագրված 669,732.0 հազար դրամի դիմաց, ինչն ավել է 2013 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից շուրջ 8.1%-ով:

Հարկային եկամուտները 2015 թվականին ծրագրվել են հիմքում ունենալով 2014 թվականի հավաքագրման սպասվող կատարողականը, վարչարարական և հետևողական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերը: Հարկային եկամուտների նախատեսված ցուցանիշը հաշվարկվել է հաշվի առնելով առկա ապառքների և 2015 թվականին առաջացող հաշվարկային ցուցանիշները: Հարկային եկամուտների կանխատեսվող աճը պայմանավորված է 2014 թվականին ձեռնարկված մեծածավալ վարչարարության արդյունքում 2015 թվականին ակնկալվող արդյունքներով, ինչպես նաև գույքային հարկերի հաշվառման շտեմարանի ճշտումների

արդյունքում դրանում լրացուցիչ հարկվող օբյեկտների ընդգրկմամբ, թեև այնտեղ դեռևս առկա են փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտացոլված ապառքներ, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով գանձման ենթակա չեն: Միաժամանակ հարկային եկամուտների առավելագույն գանձման ցուցանիշ ծրագրելու հիմքում դրվել է նաև այն, որ Երևանի քաղաքապետարանի կողմից նախատեսված և 2014 թվականից կիրառվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում հնարավորություն է ստեղծվել Երևան համայնքի համար փոխադրամիջոցի օտարման պահին ամբողջությամբ գանձելու մինչ այդ կուտակված գույքահարկի գծով ապառքները:

բ. Տեղական տուրքերը ծրագրվել են 3,459,687.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 3,471,910.0 հազ. դրամի դիմաց, ինչը սակայն ավել է 2013 թվականի փաստացի ցուցանիշից 782,596.4 հազ. դրամով կամ շուրջ 29.2%-ով:

Տեղական տուրքերի կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար նախատեսված տուրքը՝ 46% և ավտոկայանատեղի համար տուրքը՝ 26.6% :

2014 թվականին հաստատված (ճշտված) ցուցանիշի նկատմամբ տեղական տուրքերի որոշակի նվազեցում ծրագրվել է շենքերի և շինությունների շինարարության, վերակառուցման և քանդման թույլտվությունների, ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության, ինչպես նաև արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար նախատեսված տուրքերի գծով, ինչը պայմանավորված է 2014 թվականի կանխատեսվող կատարողականով, ինչպես նաև 2014 թվականին իրականացված գույքագրման արդյունքում դրանց հստակ հաշվառմամբ:

Տեղական տուրքերի կազմում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մասով 2015 թվականի բյուջեի նախագծով ծրագրվել է 1,593,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 1,513,405.0 հազ. դրամի դիմաց կամ 79,595.0 հազ. դրամով ավել: Ընդ որում նախատեսված տուրքի ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 404-Ա որոշմամբ հավանություն տրված սկզբունքով վերգետնյա անցումների կառուցման դիմաց նախատեսվող եկամտի գումարը 240,000.0 հազ. դրամի չափով:

2014 թվականի հաստատված (ճշտված) ցուցանիշի նկատմամբ աճ է ծրագրվել տեղական տուրքերի մի շարք տեսակների գծով, ինչը պայմանավորված է 2013-2014 թվականներին իրականացված մեծածավալ վարչարարական և կանոնակարգող արդյունավետ աշխատանքով, որն էլ իր հերթին իրագործելի դարձավ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքի փոփոխություններով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների արդյունքում:

գ. Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2015 թվականի համար նախագծով ծրագրվել են 375,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված (ճշտված) ցուցանիշի չափով, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 75,000.0 հազ. դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 300,000.0 հազ. դրամ:

Ցուցանիշների ծրագրման համար հիմք է ընդունվել 2014 թվականի կանխատեսվող կատարողականը, ինչպես նաև այդ տուրքերի գանձման ուղղությամբ քաղաքապետարանի գործառույթների բացակայությունը:

1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել է 22,910,127.7 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, որն ավել է 2014 թվականի համար սկզբնական հաստատված ցուցանիշից 5,094,315.14 հազ. դրամով կամ շուրջ 28.6%-ով, սակայն պակաս է ճշտված ցուցանիշից շուրջ 12.6%-ով, ինչը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 13-ի N 272-Ն, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 792-Ն և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 855-Ն որոշումներով 2014 թվականի ընթացքում տրված լրացուցիչ դրամաշնորհներով, որից.

- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախատեսվել են 12,268,897.7 հազ. դրամ կամ 2014 թվականի հաստատված ցուցանիշից 1,835,958.0 հազ. դրամով կամ

շուրջ 17.6%-ով ավել, իսկ 2013 թվականի փաստացի ստացված ցուցանիշից 2,494,695.5 հազ. դրամով կամ շուրջ 25.5%-ով ավել,

- պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաների գծով չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռք բերման համար ծրագրվել է 2,000,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեով ծրագրված 6,000,000.0 հազ. դրամի դիմաց,
- պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 8,547,093.6 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատվածից 1,164,220.7 հազ. դրամով ավել (ցանկը կցվում է),
- պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 94,136.4 հազ. դրամ՝ Աջափնյակ վարչական շրջանում Սիլիկյան թաղամասի կանաչ տարածքի հիմնման և Շենգավիթ վարչական շրջանում Արթուր Կարապետյանի անվան զբոսայգու վերակառուցման աշխատանքները կազմակերպելու համար (ցանկը կցվում է):

1.3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները 2015 թվականի նախագծով ծրագրվել են 34,777,749.5 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 36,968,313.0 հազ. դրամի դիմաց, ինչը սակայն ավել է 2013 թվականի փաստացի ցուցանիշից 36.6%-ով, որից.

- շահաբաժինների գծով 2015 թվականին ծրագրվել է 149,980.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված (ճշտված) ցուցանիշից շուրջ 58.8%-ով ավել: Հաշվարկը կատարվել է հիմք ընդունելով համայնքային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները և կանխատեսումները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշմամբ հաստատված կարգի դրույթները,

- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 597,884.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված 636,184.0 հազ. դրամի դիմաց՝ հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումը, հողի հարկի բազայի հետ համադրումը և 2013 թվականի փաստացի հավաքագրման ցուցանիշները: Նախատեսված ցուցանիշը հաշվարկվել է առկա բոլոր ապառքների 80% հավաքագրման տրամաբանությամբ, հաշվի առնելով մինչև 2009 թվականի ապառքների նկատմամբ դատարանների կողմից կիրառվող հայցային վաղեմության արդյունքում դրանց որոշ մասի գանձման անհնարինությունը, լուծված վարձակալության պայմանագրերի քանակը, վարձակալած հողամասերի մակերեսների փոփոխությունները և դրանց արդյունքում բազայի ճշգրտման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչպես նաև վարձակալության ժամկետի ավարտից հետո Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 23-ի «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 330-Ն որոշմամբ սահմանված վարձավճարների չափի փոփոխությունների արդյունքում ակնկալվող եկամուտները,
- համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 55,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի համար հաստատված (ճշտված) ցուցանիշից 5,000.0 հազ. դրամով կամ 10%-ով ավել, ինչն ավել է 2013 թվականի փաստացի կատարողականից 8,735.0 հազ. դրամով կամ 18.9%-ով,
- այլ գույքի վարձակալությունից մուտքերը ներառում են համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի, բացառությամբ հողերի, վարձակալության տրամադրման դիմաց գանձվող վարձավճարները և ծրագրվել են 379,872.0 հազ. դրամ, ինչն ավել է 2014 թվականի ճշտված ցուցանիշից 147,820.5 հազ. դրամով կամ 63.7%-ով, իսկ 2013 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից 43.6%-ով: Նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 404-Ա որոշմամբ հավանություն տրված սկզբունքով թվով 5 վերգետնյա անցումների կառուցման

դիմաց նախատեսված վարձավճարի գումարը՝ 160,000.0 հազ. դրամի չափով, ինչը ներառված է նաև 2014 թվականի ճշտված ցուցանիշում,

- պետության կողմից կրթության, ջրամատակարարման, մետրոպոլիտենի կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախագծով 2015 թվականի համար ծրագրվել են 28,939,799.1 հազ. դրամ՝ 2014 թվականի 31,367,025.0 հազ. դրամի դիմաց՝ հիմք ընդունելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները (ցանկը կցվում է),

- օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով նախատեսվել են 153,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 178,640.0 հազ. դրամի դիմաց՝ հիմք ընդունելով սպասվող կատարողականը,

- տեղական վճարների գծով ծրագրվել է 3,655,514.4 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեի 3,701,014.2 հազ. դրամի դիմաց, ինչն ավել է 2013 թվականի փաստացի հավաքագրման ցուցանիշից 585,789.6 հազ. դրամով կամ 19.1%-ով: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարի դրույքաչափերը սահմանելու մասին» N 347-Ն որոշմամբ սահմանված և 2012 թվականից կիրառվող աղբահանության վճարը, որը ծրագրվել է 3,473,014.2 հազ. դրամի չափով, ինչպես նաև համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,

ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը, որը ծրագրվել է 182,500.2 հազ. դրամ: Հարկ է նշել, որ 2012 թվականին աղբահանության վճարը առաջին անգամ կիրառելիս ոչ կենցաղային աղբի մասով տվյալները հաշվարկվել էին մակերեսների վերաբերյալ կադաստրային տվյալների հիման վրա, ինչը կիրառման ընթացքում ճշգրտվում է փաստացի օգտագործվող մակերեսներով (աղբ արտադրելու տրամաբանությամբ), և ինչպես կանխատեսված ցուցանիշները, այնպես էլ բազային տվյալները ճշգրտվում են գույքագրման արդյունքներով, ինչով էլ պայմանավորված է ծրագրված ցուցանիշների համեմատական որոշակի շեղումները,

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 310,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականին նախատեսված և 2013 թվականի փաստացի ցուցանիշներից 10,000.0 հազ. դրամով ավել,

- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 298,900.0 հազար դրամ՝ 2014 թվականի նախատեսված ցուցանիշից 114,300.0 հազ. դրամով կամ 61.9%-ով ավել: Այս եկամտատեսակի գծով էական ավելացումը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով ընձեռնված հնարավորությունների արդյունքում կիրառվող վարչարարությամբ,

- նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերի՝ տրամադրված արտաքին աղբյուրներից եկամտի գծով ծրագրվել է 10,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականին ծրագրված ցուցանիշի չափով,

- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 227,800.0 հազ.

դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 214,334.3 հազ. դրամից 6.3%-ով ավել: Ծրագրված եկամուտները ներառել են կառուցապատվող տարածքներում հարկայնության յուրաքանչյուր քառակուսի մետրի համար կառուցապատող կազմակերպությունների կողմից վճարման ենթակա պայմանագրային պարտավորությունները, ինչպես նաև ազատ ֆինանսական միջոցների կառավարումից ակնկալվող եկամուտները,

- վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումները 2015 թվականին ծրագրվել են 2,946,333.6 հազ. դրամի չափով՝ բյուջեի եկամտային և ծախսային մասերի հավասարակշռման նպատակով:

2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 72,120,838.3 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 95.4%-ը կամ 68,820,368.3 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 3,300,470.0 հազ. դրամը կամ շուրջ 4.6%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի և ելքերի գումարը կազմում է 6,607,378.1 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը ավել է 2014 թվականի սկզբնական հաստատված բյուջեով նախատեսված ծախսային մասից 2,652,290.0 հազ. դրամով, իսկ 2013 թվականի փաստացի ծախսերից 9,959,560.8 հազ. դրամով և կազմվել է առանձնացված մոտեցումների հիման վրա:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 39.4%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերին՝ 18.2%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերին՝ 10.4%:

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 3,962,616.0 հազ. դրամի չափով, որից վարչական մասի պահուստային ֆոնդը կազմում է 6,900,949.6 հազ. դրամ (վարչական եկամուտների 9.6%-ը), այդ թվում՝ 2,946,333.6 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել ֆոնդային մաս, 3,833,107.3 հազ. դրամը՝ հիմք ընդունելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը, որպես պատվիրակված լիազորություն Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրին, իսկ 8,000.0 հազ. դրամը՝ որպես ֆոնդային մասի պահուստային ֆոնդ:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով, քանի որ այն ծախսային մասով ներառելու դեպքում չէր ապահովվի «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով պահուստային ֆոնդի համար նախատեսված նվազագույն 5%-անոց շեմը: Նման օրենսդրական շեմն ըստ էության խնդիր է առաջացնում համայնքներից միայն Երևան համայնքում, հաշվի առնելով եկամուտների

կազմում պատվիրակված լիազորությունների իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող միակ բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 8,032,946.1 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 11.1%-ը, ինչը 2014 թվականի հաստատված (ճշտված) համապատասխան ցուցանիշից ավել է 986,124.1 հազ. դրամով: Այս ծրագրով նախատեսված ցուցանիշի աճը նախորդ տարվա համեմատ պայմանավորված է հիմնականում 2015 թվականի հունվարի 1-ից նախատեսվող Երևանի քաղաքապետարանում աշխատավարձերի 15% բարձրացմամբ, ինչպես նաև 2014թվականի օգոստոսի 1-ից Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում մեծ տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը՝ 5,207,165.9 հազ. դրամ, ինչը 2014 թվականի ճշտված ցուցանիշից ավել է 723,801.9 հազ. դրամով: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա՝ հաշվի առնելով ՀՀ-ում 2014 թվականին կառավարման համակարգում իրականացված աշխատավարձերի բարձրացման համատեքստում Երևանի քաղաքապետի կողմից նախաձեռնված աշխատավարձերի 15% ավելացման առաջարկը: Հաստատված հաստիքացուցակով նախատեսված 1997 (այդ թվում՝ ավագանու քննարկմանը ներկայացված

հաստիքացուցակի փոփոխության նախագծով) հաստիքից նշված ծախսային հոդվածին բաժին է ընկնում թվով 1782 հաստիքներ (առանց պատվիրակված լիազորությունների համար նախատեսված հաստիքների), որից միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակը կազմում է 1752: Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար: Նույն սկզբունքով՝ հաշվարկված և նախատեսված հաստիքներում աշխատող անձանց խրախուսման համար, աշխատավարձի ֆոնդի 14.6%-ի չափով նախատեսվել է պարգևատրման ֆոնդ: Էներգետիկ ծառայությունները ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են նախորդ տարիների փաստացի և 2014 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշներով, իսկ աճը 2014 թվականի հաստատված ցուցանիշի համեմատ պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի աճով: Մասնավորապես, այս հոդվածով 2015 թվականին նախատեսվել է 261,819.4 հազ. դրամ՝ 2014 թվականի 237,173.4 հազ. դրամի դիմաց: Կոմունալ ծառայությունները ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 16,304.6 հազ. դրամի չափով՝ 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 15,624.1 հազ. դրամի դիմաց: Կապի ծառայությունները ներառում են փոստային և սուրհանդակային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները, որոնք հաշվարկվել են 2007 թվականի օգոստոսի 24-ի «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի N340-Ն որոշման (քաղաքային ցանցի մասով), թվով 17 կետերում օպտիկական կապ ապահովելու անհրաժեշտության, ինչպես նաև փաստացի ծավալային ցուցանիշների հիման վրա: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 197,827.1 հազ. դրամ, ինչն ավել է 2014 թվականի ճշտված ցուցանիշից 3,282.8 հազ. դրամով: Այս հոդվածով ծախսերի ավելացումը պայմանավորված է բացառապես փոստային ծառայությունների ծավալների աճով, ինչն իր հերթին պայմանավորված է եկամուտների

գանձման գործընթացում օրենսդրական փոփոխությունների արդյունքում վարչարարության մեխանիզմներով: Ապահովագրական ծախսերը նախատեսվել են 5,314.3 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով 2010 թվականի մայիսի 18-ի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Երևանի քաղաքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: Գույքի և սարքավորումների վարձակալությունը ծրագրվել է 90,720.0 հազ. դրամի չափով՝ 2014 թվականի 100,800.0 հազ. դրամի դիմաց կամ 10,080.0 դրամով պակաս, որը ներառում է քաղաքապետարանի որոշ ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի տրամադրումը և այլն: Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը պլանավորվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, նախորդ տարիների փաստացի, 2015 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները և ծրագրվել է 66,300.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ի սկզբանե հաստատված ցուցանիշից 4,200.0 հազ. դրամով պակաս: Այս հոդվածով նախատեսված ծախսերը վերաբերում են Երևանի քաղաքապետարանի՝ ներառյալ Երևան քաղաքի ավագանու անդամների, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի գործուղումներին: Վարչական ծառայությունների գծով նախատեսվել է 3,404,9 հազ. դրամ՝ քաղաքապետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմերում գրքերի (փաստաթղթերի) կարման ծառայությունների համար՝ 2014 թվականի ճշտված 2,904.9 հազ. դրամի դիմաց: Համակարգչային ծառայությունների գծով ծրագրվել է 36,954.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման համար, ինչն ավել է 2014 թվականի

ճշտված ցուցանիշից 759.2 հազ. դրամով: Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար նախատեսվել է 10,010.0 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացն ապահովելու նպատակով, իսկ 2014 թվականի բյուջեի նկատմամբ 770.0 հազ. դրամի աճը պայմանավորված է վերապատրաստում անցնող համայնքային ծառայողների թվաքանակի ավելացմամբ՝ 2015 թվականին վերապատրաստում են անցնելու թվով 455 համայնքային ծառայող: Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 39,423.1 հազ. դրամի չափով՝ 2014 թվականին հաստատված ցուցանիշից 386.1 հազ. դրամով պակաս՝ պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական և գովազդային ծառայությունների ձեռքբերման համար: Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 10,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված ցուցանիշի չափով և ներառում են աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները, մասնավորապես «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու համար: Ներկայացուցչական ծախսերի գծով նախատեսվել է 146,163.9 հազ. դրամ, ինչն ավել է 2014 թվականի ճշտված ցուցանիշից 9,778.5 հազ. դրամով, պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների և արարողակարգային բնույթի միջոցառումների հետ կապված ծախսերի, ինչպես նաև աշխատակազմերում առօրյա ներկայացուցչական ծախսերն իրականացնելու համար: Այս հոդվածով նախատեսված ծախսերի համեմատական աճը բացառապես պայմանավորված է 2015 թվականին ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ կանխատեսվող պատվիրակությունների քանական աճի միտումով: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները ծրագրվել են 300,103.0 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի, 2-րդ վարչական շենքի, ինչպես նաև Գրիգոր Լուսավորիչի 7 հասցեում գտնվող շահագործման ենթակա Երևանի քաղաքապետարանի վարչական տարածքի պահպանման ծախսերը, այդ թվում՝

մաքրման ծառայությունները, նյութերը, ընթացիկ այլ աշխատանքները, նաև քաղաքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցության ապահովման համար անհրաժեշտ ծառայությունները և այլն: Ծրագրված ցուցանիշը ավել է նախորդ տարվա ճշտված ցուցանիշից 31,550.5 հազ. դրամով, ինչը հիմնավորվում է 2015 թվականին նվազագույն աշխատավարձի կանխատեսվող փոփոխության տրամաբանությամբ և պայմանավորված է սպասարկող աշխատակազմի աշխատողների աշխատավարձերի ընդհանուր ավելացմամբ: Մասնագիտական ծառայությունների գծով նախատեսվել է 10,604.9 հազ. դրամի չափով ծախս՝ հիմնականում փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և ավտոմատ հեռախոսակայանի սպասարկման, հնոցապահի ծառայության համար և ծրագրվել է 2014 թվականի հաստատված բյուջեից 39.0 հազ. դրամով պակաս: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծրագրվել է 275,144.9 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 765.2 հազ. դրամով պակաս, որը ներառում է քաղաքապետարանի և վարչական շրջանների ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել են 2014 թվականի գնման գործընթացի արդյունքում ձևավորված գները և քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված և փաստացի շահագործվող գույքի քանակական ցուցանիշները: Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով ծախսերը ծրագրվել են 80,417.4 հազ. դրամ, ինչն ավել է 2014 թվականի հաստատված բյուջեից 4,159.7 հազ. դրամով, և հաշվարկվել են հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: Տրանսպորտային նյութերը ծրագրվել են 262,391,2 հազ. դրամի չափով 2014 թվականին ճշտված ցուցանիշից 2,154.0 հազ. դրամով պակաս և հաշվարկվել են վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով, ինչպես նաև որոշ կառուցվածքային ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման հանգամանքով: Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով ծրագրվել է 24,711.7 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված ցուցանիշից 996.5 հազ. դրամով ավել: Հատուկ նպատակային այլ

նյութերի գծով ծրագրվել է 5,850.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից 600.0 հազ. դրամով պակաս, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերում: Այլ նպաստներ բյուջեից հոդվածով նախատեսվել է 41,150.0 հազ. դրամ, որից 200.0 հազ. դրամը հատկացվում է որպես խեղճան նպաստ, իսկ 40,950.0 հազ. դրամը՝ որպես դրամական փոխհատուցում Երևան քաղաքի ավագանու անդամներին, ինչն ավել է 2014 թվականի հաստատված ցուցանիշից 3,900.0 հազ. դրամով՝ 2015 թվականի հուլիսի 1-ից ամսական նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ պայմանավորված: Պարտադիր վճարների գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 3,125.0 հազ. դրամ: Այլ ծախսեր հոդվածով ծրագրվել է 23,500.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված ցուցանիշի չափով 2015 թվականի ընթացքում կառավարչական մարմնի պահպանման հետ կապված այլ չկանխատեսված ծախսերի կամ դրանց փոփոխությունների համար: Տրանսպորտային սարքավորումների գծով՝ հին և մեծ ծառայողական ծախսեր պահանջող ավտոմեքենայի փոխարինման նպատակով մեկ ավտոմեքենայի ձեռք բերման համար, նախատեսվում է 9000.0 հազ. դրամ, 2014 թվականի հաստատված բյուջեի 50,900.0 հազ. դրամի դիմաց կամ 41,900.0 հազ. դրամով պակաս: Վարչական սարքավորումների գծով ծրագրվել է 138,911.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված ցուցանիշից 14,079.0 հազ. դրամով ավել, որի շրջանակներում հիմնականում նախատեսվել է կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներն ապահովել անհրաժեշտ գույքով և տեխնիկայով: Այս հոդվածով նախատեսված ցուցանիշի աճը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանում հայելային սերվերային կենտրոնի ստեղծմամբ՝ Երևանի քաղաքապետարանի և ենթակառուցվածքների կառավարման համակարգերի և տեղեկատվական շտեմարանների անվտանգության բարձրացման նպատակով, ինչպես նաև գլխավոր մասնաշենքի մեկ պատուհանում հերթի կառավարման էլեկտրոնային համակարգի տեղադրմամբ: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով 2015 թվականին ծրագրվել է 8091.3 հազ. դրամ, ինչի շրջանակներում նախատեսվում է փոխարինել Երևանի

քաղաքապետարանի վարչական շենքի հին, անհուսալի և վթարավտանգ էլեկտրական վահանակները:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 148,498.5 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեի 164,048.1 հազ. դրամի դիմաց, որն ուղղվելու է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի թանգարանային հատվածի ամրացմանը, աշտարակի նորոգմանը, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների վարչական շենքերի նորոգման աշխատանքների շարունակությանը:

3. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով ծրագրվել է 72,050.7 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները:

4. Նախագծային աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 182,800.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 290,700.0 հազ. դրամի դիմաց՝ 2016 թվականի բյուջեն ծրագրելիս կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

5. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն ծրագրով նախատեսվել է 6,000.0 հազ. դրամ՝ 2014թ ճշտված բյուջեի չափով՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պահանջներով պայմանավորված՝ ըստ տարիների կատարված աշխատանքների վերլուծության հիման վրա ճշգրտումներ կատարելու համար:

6. Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում ծրագրով նախատեսվել է 27,000.0 հազ. դրամ, որից 22,000.0 հազ. դրամը՝ Ավան վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակման և 5,000.0 հազ. դրամը՝ նախկինում մշակված գոտիավորման նախագծերի ճշգրտման համար:

7. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ ծրագրով նախատեսվել է 40,500.0 հազ. դրամ՝ դատարան դիմելիս պետական տուրքերի վճարման համար, ինչը 11,795.0 հազ. դրամով պակաս է 2014 թվականի ճշտված ցուցանիշից:

8. Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրով նախատեսվել է 91,070.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 101,850.0 հազ. դրամի դիմաց, ինչը ներառում է ինչպես Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, այնպես էլ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

9. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և գորակնչի կազմակերպմանն աջակցություն ծրագրերով նախատեսվել են համապատասխանաբար 17,000.0 հազ. դրամ և 20,070.0 հազ. դրամ, ինչը պայմանավորված է գործող օրենդորությամբ նախատեսված նվազագույն և անհրաժեշտ աջակցությունն ապահովելով: 2014 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ գումարը ծրագրվել է 5,200.0 հազ. դրամով պակաս:

10. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 171,453.4 հազ. դրամ, որից 108,350.0 հազ. դրամը՝ Երևան քաղաքի վարչական շրջաններում նոր ստեղծվող կանաչ տարածքներում, ինչպես նաև առկա սիզամարգերում ոռոգման ցանցի ապահովման համար՝ հիմք ընդունելով սահմանված կարգով կազմված նախահաշվային փաստաթղթերը, իսկ 63,103.4 հազ. դրամը՝ ոռոգման նպատակով հորատանցքների հորատման աշխատանքների իրականացման համար:

11. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ու ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրերով նախատեսվել է 4,082,636.7 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 5,376,886.7 հազ. դրամի դիմաց կամ 1,294,250.0 հազ. դրամով պակաս: Նախատեսված գումարից 3,284,000.0 հազ. դրամը նախատեսված է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով որպես նպատակային հատկացում (սուբվենցիա): Նշված ընդհանուր գումարի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 870,000 քմ ասֆալտ-բետոնյա ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 60-70%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում՝ այդպիսով ավարտին մոտեցնելով բակային տարածքների

նորոգման աշխատանքների ծրագիրը, ինչպես նաև շուրջ 10,000 քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

12. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 32,960.4 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման համար, ինչպես նաև քայքայված բետոնե եզրաքարերի վերականգնման համար, ինչը պակաս է 2014 թվականի ճշտված բյուջեից 7,638.4 հազ. դրամով:

13. Հենապատերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 90,352.6 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեից 81,530.3 հազ. դրամով պակաս, համապատասխան նախահաշվային արժեքներով: Առկա վթարային հենապատերից ընտրվել են առաջնայինները:

14. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 411,344.0 հազ. դրամ, որից 6,344.0 հազ. դրամը՝ հետիոտն անցումների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար, իսկ 405,000.0 հազար դրամը՝ թվով 5 վերգետնյա անցումների կառուցման համար: Վերգետնյա անցումների կառուցման ծրագիրը նախատեսվել է Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. N 404-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրով և հաշվարկվել է թվով 5 վերգետնյա անցումների շինարարության արժեքը՝ 400,000.0 հազար դրամ, որի վճարման դիմաց նախատեսվել են 260,000.0 հազ. դրամ՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության տուրքի և 140,000.0 հազ. դրամ՝ գովազդային տարածքի վարձավճարի գծով եկամուտներ: Մուտքերի և ելքերի հստակ արժեքները կձևավորվեն գնման մրցութային գործընթացի արդյունքում: Անցումների կառուցման տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 5,000.0 հազար դրամի չափով նախատեսվել է Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին: Գումարը նախատեսվել է 2014 թվականի հաստատված բյուջեից 167,000.0 հազ. դրամով պակաս:

15. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 90,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 110,000.0 հազ. դրամի դիմաց և ուղղվելու է Երևան քաղաքի կամուրջների սպասարկման աշխատանքների իրականացմանը:

16. Հրազդանի կիրճի բարեկարգում ծրագրով նախատեսվել է 2,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեի 1,997.8 հազ. դրամի դիմաց՝ Արաբկիր

վարչական շրջանի մասով ընթացիկ բարեկարգման և մաքրման աշխատանքների համար:

17. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 817,810.5 հազ. դրամի դիմաց, իսկ 2014 թվականի ճշտված բյուջեից 5,239,699.5 հազ. դրամով պակաս: 2014 թվականին այս ծրագրով ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացվել են մեծածավալ հիմնանորոգման աշխատանքներ, ուստի 2015 թվականին առաջնահերթությունը տրվել է Երևան քաղաքի զարգացման 2014-2017 թվականների ծրագրով նախատեսված այլ գերակայություններին: Ծրագրված 200,000.0 հազ. դրամից 50,000.0 հազ. դրամի շրջանակներում նախատեսված է իրականացնել մայրերի սալիկապատման աշխատանքներ, իսկ 150,000.0 հազ. դրամի շրջանակներում թվով 2 փողոցների հիմնանորոգման աշխատանքներ՝ հիմք ընդունելով քաղաքի համաչափ զարգացման հիմնարար սկզբունքը:

18. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով նախատեսվել է 60,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեի չափով, որից 20,000.0 հազ. դրամը՝ քաղաքի տարբեր հատվածներում մետաղական ցանկապատերի վերանորոգման և ներկման, իսկ 40,000.0 հազ. դրամը՝ Երևանի տարբեր փողոցների միջնապատերի և այլ հատվածների ընթացիկ բարեկարգման աշխատանքները համայնքային կազմակերպությունների միջոցով իրականացնելու համար:

19. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն ծրագրով նախատեսվել է 700,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի բյուջեի ճշտված ցուցանիշի չափով, այն մոտեցմամբ, որ ավտոկայանատեղին «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքով 2013 թվականից կազմակերպվել է գնումների օրենսդրությամբ մրցույթով ընտրված կազմակերպչի կողմից: Անհրաժեշտ ներդրումներն իրականացվում են վերջինիս հաշվին, իսկ գանձված տուրքի առավելագույնը 70%-ը կուղղվի այդ ծախսերի իրականացմանը:

20. Թերահարթակների կառուցում և ավտոբուսներում թերահարթակների ապահովում ծրագրերով՝ տեղաշարժվելու դժվարություն ունեցող անձանց կողմից ներկայացված առաջնահերթությամբ՝ տեղաշարժման մատչելիություն ապահովելու նպատակով նախատեսվել է համապատասխանաբար 40,000.0 հազար դրամ՝ 2014

թվականի ճշտված բյուջեի չափով՝ փողոցներում և մայթերում շուրջ 160 թեքահարթակների կառուցման համար և 30,000.0 հազար դրամ՝ Երևանի ենթակայության թվով 10 ավտոբուսներում թեքահարթակների կամ հատուկ վերելակային հարմարանքների ձեռք բերման և տեղադրման համար:

21. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով նախատեսվել է 240,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և վարչական շրջանների փողոցներում տեղադրել նորաճ նստարաններ, աղբամաններ, փողոցների ուղենիշեր, ծառաբների մետաղական ծածկույթներ, հայտարարությունների ցուցատախտակներ, տեղադրել քաղաքային նոր ինստալյացիաներ, այգիներում ավելացնել նստարանների քանակը, ինչպես նաև վերանորոգել նախորդ տարիներին տեղադրված նստարաններն ու աղբամանները:

22. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ ծրագրով նախատեսվել է 574,560.2 հազ. դրամ: Վերոհիշյալ ծրագրի իրականացման նպատակով Երևան քաղաքի վարչական սահմաններում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գտնվող օտարվող սեփականության (հողի) դիմաց փոխհատուցում տրամադրելու համար՝ որպես ներդրումային ծրագրի համաֆինանսավորում, ինչը նախատեսված էր նաև 2014 թվականին:

23. Վերելակների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 98,392.1 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 97,064.9 հազ. դրամի դիմաց՝ բազմաբնակարան շենքերի վերելակների համար սարքավորումների ձեռք բերման և տեղադրման նպատակով:

24. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 2,761,183.5 հազ. դրամ՝ մետրոպոլիտենի սուբսիդավորման նպատակով՝ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը:

25. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 576,360.5 հազ. դրամ որպես սուբսիդիա

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին, որի ծրագրման հիմքում ընկած է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումը (սուբվենցիա):

26. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել են ընդհանուր 3,147,562.8 հազ. դրամի ծրագրեր որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագրերը (ցանկը կցվում է):

27. Զբոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազար դրամ՝ 2014 թվականի հաստատված ցուցանիշի չափով՝ Երևան քաղաքի (այդ թվում՝ տեսարժան վայրերի) վերաբերյալ տեղեկատվական բուկլետների տպագրման և տարածման, ինչպես նաև Երևանը զբոսաշրջիկների համար ճանաչելի դարձնելուն ուղղված միջոցառումների իրականացման համար:

28. Դրոշների տեղադրում ծրագրով նախատեսվել է 57,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը, սպասարկումը և նախատեսվել է 2014 թվականի ճշտված ցուցանիշից 27,000.0 հազ. դրամով պակաս:

29. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով նախատեսվել է 23,591.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված ցուցանիշի 22,718.0 հազ. դրամի դիմաց, ինչը ծրագրավորվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը և նախատեսվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների համար, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանության համար:

30. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով նախատեսվել է 134,657.1 հազ. դրամ՝ քաղաքապետարանի ծրագրային

ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին սուբսիդավորելու համար և ծրագրվել է 2014 թվականի հաստատված ցուցանիշից 9,657.1 հազ. դրամով ավել:

31. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով նախատեսվել է 252,000.0 հազ. դրամ, որից 200,000.0 հազ. դրամը ընթացիկ դրամաշնորհների տեսքով՝ կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերվող ծրագրերին աջակցելու նպատակով, իսկ 52,000.0 հազ. դրամը վարչական շրջանների հասարակական կազմակերպություններին շրջաններին վերաբերվող տարբեր ծրագրերին մասնակցելու համար, և հաշվարկվել է 2014 թվականի ճշտված ցուցանիշից 153,913.0 հազ. դրամով պակաս:

32. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով նախատեսվել են մուտքեր 6,607,378.1 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված ցուցանիշից 7,691,620.8 հազ. դրամի դիմաց, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 1,300,000.0 հազ. դրամի չափով, որից 700,000.0 հազ. դրամը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմամբ նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների օտարումից և 600,000.0 հազ. դրամը՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված և շահագործման համար ոչ պիտանի կաթսայատների և այլ գույքի օտարումից,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 5,307,378.1 հազ. դրամի չափով, որից 4,307,378.1 հազ. դրամը՝ հողերի աճուրդով և ուղղակի վաճառքով օտարումներից, իսկ 1,000,000.0 հազ. դրամը՝ օրինականացված ինքնակամ կառույցների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողերի օտարումից: Հաշվարկներն իրականացվել են հիմք ընդունելով գույքագրման արդյունքները, ընթացիկ տարվա օտարման միտումները և գործընթացի ակտիվացման հնարավորությունները:

33. Տոնական ձևավորում ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ՝ տոնական օրերին Երևան քաղաքը պատշաճ ձևավորելու, այդ թվում՝ տոնական լույսեր և սարքավորումներ ձեռք բերելու համար և ծրագրվել է 2014 թվականի հաստատված ցուցանիշից 15,000.0 հազ. դրամով պակաս:

34. Հասցեավորման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 135,000.0 հազար դրամ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն հասցեավորման ծառայություններ ձեռք բերելու նպատակով և հաշվարկվել է 2014 թվականի կանխատեսվող կատարողականից ելնելով:

35. Ներդրումային ծրագրերի իրականացում ծրագրով նախատեսվում է 128,200.0 հազ. դրամ, որից 8,200.0 հազ. դրամը՝ 2014 թվականի հաստատված բյուջեի չափով և նախատեսվում է ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների տպագրության համար, որը նպատակ ունի իրազեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, իսկ 120,000.0 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին և ծրագրվել է 2014 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

36. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 360,711.4 հազ. դրամ, որից 13,410.0 հազ. դրամը՝ աղբահանության վճարների կանխիկ գանձման անդորրագրերի տպագրության համար, 80,392.9 հազ. դրամը՝ աղբահանության վճարների գանձումը թվով 2 վարչական շրջաններում օպերատորների միջոցով իրականացնելու համար, և 266,908.5 հազ. դրամը՝ մյուս վարչական շրջաններում նույն ծառայության դիմաց (ներառյալ՝ համատիրություններին) վճարման համար: Ծառայությունների դիմաց վճարումը նախատեսվել է փաստացի գանձվող աղբահանության վճարի 10%-ի չափով:

37. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում ծրագրով նախատեսվել է 13,000.0 հազ. դրամ, որից 2,000.0 հազ. դրամը հաշմանդամներին ավտոկայանատեղիի արտոնություն սահմանելու և 6,000.0 հազ. դրամը՝ տեսահաղորդակցման հնարավորությամբ տեղեկատվական դիսպետչերական կենտրոնի ստեղծման, կարիքավոր խուլ և համր մարդկանց դիսպետչերական կենտրոն զանգահարելու համար տեսահաղորդակցման հնարավորությամբ պլանշետների տրամադրման համար, 5,000.0 հազ. դրամը՝ թվով

40 ավտորուսներում ուղևորների և կույր հաշմանդամների համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման, կանգառները ավտոմատ հայտարարման համակարգով կահավորման համար:

38. Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացում ծրագրով նախատեսվել է 9,720.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագիրը:

39. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրով նախատեսվել է 5,070,106.4 հազ. դրամ՝ Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ ձեռք բերելու համար և հաշվարկվել ու ծրագրվել է 2014 թվականի ճշտված ցուցանիշից 1,560.0 հազ. դրամով պակաս:

40. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 264,102.4.0 հազ. դրամ: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան ընտրված օպերատորի միջոցով սպասարկել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի աղբամուղերը(խցանման մաքրում, ախտահանում), իրականացնել աղբամուղերի աղբընդունիչների վերանորոգումը, ինչպես նաև ապահովել վարչական շրջաններում հավաքված շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը: Ծառայությունը իրականացվում է առաջին անգամ, մեկնարկը նախատեսվում է 2015 թվականի ապրիլի 1-ից, իսկ ֆինանսական և քանակական ցուցանիշները կճշգրտվեն փաստացի կատարողականի շրջանակներում:

41. Գետերի հունների մաքրում ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ՝ ըստ վարչական շրջաններով անցնող հատվածների՝ համապատասխան հաշվարկներով, 2014 թվականի հաստատված ցուցանիշից 18.9 հազ. դրամով պակաս:

42. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 1,663,510.6 հազ. դրամ, որից 1,499,500.0 հազ. դրամը ներառում է կանաչ տարածքների պահպանման ծառայությունները, նյութերը և ոռոգման ջրի արժեքը, ծառերի էտման ծառայությունը, 30,000.0 հազ. դրամը՝ տնկիների ձեռքբերումը, 40,000.0 հազ. դրամը՝ քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերը, 94,136.4 հազ. դրամը՝ նոր կանաչ տարածքների հիմնման համար, որը նախատեսվել է հիմք ընդունելով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի

նախագծով նախատեսված կապիտալ սուբվենցիայի գումարը: Այս ծրագրով հատկացումները ավել են 2014 թվականի ճշտված ցուցանիշից 58,136.4 հազ. դրամով, իսկ ծրագիրը 2015 թվականի բյուջետային գործընթացում նույնպես դիտվել է որպես գերակայություն:

43. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 41,051.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար և ծրագրվել է 2014 թվականի համապատասխան ցուցանիշից 5,000.0 հազ. դրամով պակաս:

44. Հասարակական գուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 2,430.0 հազ. դրամ՝ պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար:

45. Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում ծրագրով նախատեսվել է 312,200.0 հազ. դրամ, ինչն ավել է 2014 թվականի իսկբզանե հաստատված ցուցանիշից 20,295.0 հազ. դրամով՝ ինչի շրջանակներում նախատեսվում է գազոնապատել և ծաղկապատել քաղաքի փողոցների, հրապարակների և քաղաքի մուտքերի շրջակայքը: Ընդ որում՝ նշված գումարի շրջանակներում ավելի արդյունավետ կազմակերպելու արդյունքում նախատեսվում է ձեռք բերել ծաղկասածիլներ, սիզամարգերի ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ բուսահող և կարմիր ավազ, ինչպես նաև ապահովել տեղական մշտադալար տնկիների և սածիլների ձեռքբերումը՝ դրանով իսկ էապես ավելացնելով Երևան քաղաքի սիզամարգերի ծաղկապատ և կանաչապատ մակերեսները: Որոշ նյութերի ձեռք բերմամբ և օգտագործմամբ նախատեսվում է նաև սիզամարգերի գեղարվեստական ձևավորում:

46. Թափառող կենդանիների վնասազերծում ծրագրով նախատեսվել է 120,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված ցուցանիշից 100,000.0 հազ. դրամով պակաս՝ Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասազերծման խնդիրը կանոնակարգելու համար:

47. Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով նախատեսվել է 22,514.4 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված ցուցանիշից 4,082.7 հազ. դրամով պակաս՝ այն ինքնակամ կառույցների քանդման համար, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների հաշվին:

48. Հորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 3,613,331.2 հազ. դրամ, Մարգարյան 45, Շինարարների 6, 15 և Սիսակյան 16 հասցեներում չորրորդ աստիճանի ազատված վթարային շենքի քանդման, նույն տեղում բազմաբնակարան շենքի կառուցման 2014 թվականին սկսված աշխատանքների շարունակությունն ապահովելու և ավարտին հասցնելու համար: 2014 թվականին սկսված այս ծրագիրը նախատեսում է 5,634,750.0 հազ. դրամի շրջանակներում կառուցել թվով 4 բազմաբնակարան շենքեր՝ ձեռք բերելով շուրջ 450 բնակարաններ և դրանով իսկ ամբողջությամբ լուծելով այդ պահին հաշվառված 4-րդ կարգի վթարային շենքերի բոլոր բնակիչներին նոր բնակարաններով ապահովելու հիմնախնդիրը: Նշված գումարից 4,000,000.0 հազ. դրամը տրամադրվում է ՀՀ պետական բյուջեից, իսկ 1,634,750.0 հազ. դրամը՝ Երևան քաղաքի բյուջեից: 2014 թվականին այս գումարից ծրագրվել էր 2,700,000.0 հազ. դրամ, որի կատարողականը ակնկալվում է 2,100,000.0 հազ. դրամի շրջանակներում, ուստի մնացած մասը նախատեսվել է 2015 թվականին: Միաժամանակ այս ծրագրով 78,581.2 հազ. դրամի շրջանակներում նախատեսվել է նաև իրականացվող ծրագրի ընթացքում ազատված վթարային շենքերի քանդման աշխատանքները՝ նախագծային փաստաթղթերի հիման վրա: Ծրագիրը դիտվել է որպես գերակայություն:

49. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագրով (պատվիրակված լիազորություններ) և Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 3,049,011.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություններ և ծրագրվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

50. Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ, ինչը պակաս է 2014 թվականի ճշտված ցուցանիշից 145,000.0

հազ. դրամով՝ չլուսավորվող առաջնահերթ փողոցների և որոշ բազմաբնակարան շենքերի բակերի լուսավորությունը վերականգնելու համար:

51. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 2,121,973.0 հազ. դրամ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագիրը նախատեսված է ՀՀ 2015 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացման (սուբվենցիայի) հաշվին:

52. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով նախատեսվել է 9,000.0 հազ. դրամ՝ Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի հրապարակի և Բագրատունյաց փողոցի շենքերի նեոնային լուսավորությունը վերականգնելու և ապահովելու նպատակով:

53. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 8,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշի չափով, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի վթարայնության աստիճանի հետազոտումը և ինքնական կառույցների օրինականացման գործընթացում կառույցների վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

54. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 456,224.2 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեից 84,359.8 հազ. դրամով պակաս, որից 251,000.0 հազ. դրամով նախատեսվել է վարչական շրջաններում հիմնանորոգել թվով 12 բազմաբնակարան շենքերի թեք տանիքներ բոլոր: Մնացած գումարը նախատեսվել է հարթ և թեք տանիքների ընթացիկ նորոգման և պահպանման՝ տարբեր մոտեցումներով աշխատանքները կազմակերպելու համար (աշխատանքների պատվեր, նյութերի տրամադրում համատիրություններին և այլն):

55. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 1,489,523.7 հազ. դրամ՝ 12 վարչական շրջանների կողմից ընտրված բակերի բարեկարգման, ինչպես նաև վարչական շրջաններում թվով 11 նոր մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման համար: Միաժամանակ

նախատեսվել է 200,000.0 հազ. դրամի շրջանակներում ձեռք բերել և բարեկարգվող բակային տարածքներում տեղադրել մանկական խաղեր:

56. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով նախատեսվել է ընդհանուր 557,148.0 հազ. դրամ, որից 50,000.0 հազ. դրամը նախատեսվում է շենքերի ֆասադների ընթացիկ նորոգման և մաքրման համար, 10,000.0 հազ. դրամը՝ շենքից թափվող սալերից պաշտպանիչ միջոցառումների համար, իսկ 497,148.0 հազ. դրամը՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի ամբողջական վերանորոգման, ջրթափ խողովակների փոխարինման և այլ աշխատանքների համար: Բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգումը սահմանվել է 2015 թվականի համար որպես գերակայություն, իսկ ծրագրված ցուցանիշը ավել է 2014 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 57,670.7 հազ. դրամով:

57. Զրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 320,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար՝ 2014 թվականի ցուցանիշի չափով:

58. Կաթսայատների պահպանում ծրագրով նախատեսվել է 26,871.6 հազ. դրամ, 2014 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշի չափով և ներառում է Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

59. Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում ծրագրով նախատեսվել է 60,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ցուցանիշից 50,000.0 հազ. դրամով պակաս, ինչը ներառում է շենքերի դեկորատիվ գունազարդումը, քաղաքի վնասված կամարանցումների վերանորոգումը, քաղաքային մետաղյա հենասյունների վերանորոգումը և հատուկ նյութով երեսապատումը, ինչպես նաև քաղաքային ինստայացիաների տեղադրումը:

60. Վթարային պատշգամբների նորոգում ծրագրով նախատեսվել է 70,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված ցուցանիշից 19,898.3 հազ. դրամով պակաս, և ծրագրվել է նորոգել շուրջ 250 վթարային պատշգամբ:

61. Կոյուղագծերի կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 27,000.0 հազ. դրամ, 2014 թվականի ճշտված ցուցանիշից 6,494.4 հազ. դրամով

պակաս, Երևան քաղաքի որոշ վթարային կոյուղագծերի և հեղեղատարների հիմնանորոգման համար:

62. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում ծրագրով նախատեսվել է համայնքային կազմակերպություններին հատկացնել 71,500.0 հազ. դրամ՝ առաջնային օղակի առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների ձեռք բերման համար:

63. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 25,027.0 հազ. դրամ՝ հակատուբերկուլյոզային դեսպանների ռենտգեն բաժանմունքի վերանորոգման, թիվ 5 պոլիկլինիկայի լուսամուտների փոխարինման և թիվ 17 պոլիկլինիկայի թեք տանիքի վերանորոգման համար:

64. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում ծրագրով նախատեսվել է 12,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեից 3,000.0 հազ. դրամով պակաս, որի շրջանակներում նախատեսվել է սոցիալապես անապահով քաղաքացիներին կոմայուտերային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրման համար:

65. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 136,799.9 հազ. դրամ՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված և 2015 թվականին սպասվող միջոցառումների քանակն ու որակական փոփոխությունների անհրաժեշտությունը: 2014 թվականի համեմատ 19,900.0 հազ. դրամի ավելացումը պայմանավորված է Համահայկական խաղերին Երևան քաղաքի մասնակցությամբ:

66. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով նախատեսվել է 660,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 666,763.7 հազ. դրամի դիմաց, որից՝ 24,000.0 հազ. դրամը հանգստի գոտիների և զբոսայգիների ընթացիկ և կապիտալ նորոգման և պահպանման համար, 396,000.0 հազ. դրամը՝ Կոմիտասի անվան զբոսայգու և մի շարք այլ հանգստի գոտիների ստեղծման և վերականգնման, 200,000.0 հազ. դրամը՝ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում ազատամարտիկների այգու կառուցման համար (ավարտական փուլ), իսկ 40,000.0 հազ. դրամը՝ Սիրահարների զբոսայգու պահպանման համար:

67. Հեծանվահրապարակի շահագործում ծրագրով նախատեսվել է 48,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի չափով:

68. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 446,787.0 հազ. դրամ՝ Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար: 2014 թվականի հաստատված բյուջեի համեմատ 81,549.3 հազ. դրամի ավելացումը պայմանավորված է Երևանի ենթակայության գրադարաններում նախատեսվող աշխատավարձերի շուրջ 20% բարձրացմամբ:

69. Գրադարանների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 250,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված բյուջեի 245,000.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ամբողջությամբ նորոգել Երևանի ենթակայության գործող գրադարանները՝ հիմնովին լուծելով հիմնախնդիրը:

70. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով նախատեսվել է 265,227.7 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

71. Թանգարանների նորոգում ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ Երևանի Էրեբունի թանգարանի նորոգման համար:

72. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 90,909.1 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության «Ավանի մշակույթի տուն», «Երևանի «Սեբաստիա» մշակույթի կենտրոն», «Նոր Նորքի մշակույթի կենտրոն», «ՀՀ Երևանի Շենգավիթ համայնքի թիվ 5 մշակույթի կենտրոն» և «Ձեյթուն» մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ների պահպանման համար: 2014 թվականի հաստատված բյուջեի համեմատ 5,800.9 հազ. դրամի ավելացումը պայմանավորված է միայն «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ:

73. Մշակույթի տների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 97,100.0 հազ. դրամ՝ Երևանի Ավան, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների մշակույթի տների հիմնանորոգման համար, որի արդյունքում Երևան քաղաքում բոլոր մշակույթի տները կլինեն նորոգված:

74. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 688,407.8 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեից 43,610.0 հազ. դրամով ավել, որի հաշվարկման հիմքում ընկած է 2014 թվականի նույն միջոցառումների համար

սպասվող կատարողականը, իսկ ավելացումը պայմանավորված է բացառապես ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված լրացուցիչ միջոցառումներով:

75. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով նախատեսվել է 249,938.5 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

76. Կենդանաբանական այգու հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 250,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 300,000.0 հազ. դրամի դիմաց: Ծրագիրը շարունակական է և նախատեսվում է ավարտել Երևան քաղաքի զարգացման 2014-2017 թթ. ծրագրի շրջանակներում:

77. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով նախատեսվել է 98,991.7 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 93,712.3 հազ. դրամի դիմաց՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլիարմոնիա», «Մարաթուկ» մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ների և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ-ի սուբսիդավորման համար: 2014 թվականի հաստատված բյուջեի համեմատ ավելացումը պայմանավորված է միայն «Նվագագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ:

78. Թատերական ներկայացումներ ծրագրով նախատեսվել է 359,342.6 հազ. դրամ Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

79. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 25,700.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 26,700.0 հազ. դրամի դիմաց՝ հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

80. Քաղաքապետարանի աշխատանքների լուսաբանում ծրագրով նախատեսվել է 36,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի չափով, որն ուղղվելու է մայրաքաղաքային առօրյա կյանքի, բնակչությանը հուզող խնդիրների,

դրանց լուծման ուղիների, քաղաքի ապագային միտված նախաձեռնությունների և զարգացման նպատակային ծրագրերի հեռուստատեսային լուսաբանմանը:

81. Անդամակցության վճարները ծրագրով նախատեսվել է 25,825.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի, Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության, Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի, Հայաստանի համայնքների միության և Հայաստանի ավագանիների ասոցիացիայի անդամակցության վճարները վճարելու համար: 2014 թվականի ճշտված ցուցանիշի նկատմամբ 484.2 հազ. դրամի ավելացումը պայմանավորված է «Տեղական իշխանությունները հանուն կայունության» ասոցիացիային անդամակցությամբ և արտարժույթի փոխարժեքի տատանումներով:

82. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 7,566,404.3 հազ. դրամ: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրվել է 22.5 հազ. դրամի չափով (2014 թվականի 19.0 հազ. դրամ), ինչպես նաև յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար ամսական 650,0 հազ. դրամ, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով 2014 թվականին երեխաների փաստացի միջին թիվը: 2014 թվականի ճշտված բյուջեի համեմատ 1,017,122.1 հազ. դրամի ավելացումը հիմնականում պայմանավորված է Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատողների աշխատավարձերի շուրջ 15-20% բարձացմամբ և կանոնակարգմամբ:

83. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ 2014 թվականի հաստատված բյուջեի 300,000.0 հազ. դրամի դիմաց, ինչի շրջանակներում նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների համար ձեռք բերել և թարմացնել մահճակալներ, սեղաններ, աթոռներ, սարքավորումներ (գազօջախ, սառնարան, մսաղաց) և այլն: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

84. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ)

ծրագրով նախատեսվել է 2,494.3 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

85. Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն

և երեկոյան ուսուցում ծրագրերով նախատեսվել է 15,052,733.4 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

86. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով

նախատեսվել է 2,307,142.6 հազ. դրամ, ինչը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտ դպրոցների պահպանման ծախսերը, որոնք նախատեսվել են ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

87. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և

վերանորոգում ծրագրով նախատեսվել է 611,744.9 հազ. դրամ, որից՝ 411,800.0 հազ. դրամը Երևանի ենթակայության թվով 9 արվեստի դպրոցների հիմնանորոգման համար, 36,200.0 հազ. դրամը՝ թվով 3 երաժշտական դպրոցների, 24,741.7 հազ. դրամը՝ թվով 2 մարզադպրոցների և 1 շախմատի դպրոցի հիմնանորոգման համար, ինչի շնորհիվ բոլոր արվեստի դպրոցները կհիմնանորոգվեն:

88. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական

դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 7,980.2 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

89. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային

նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսվել է 162,709.0 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

90. Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի

ծեռք բերում ծրագրով նախատեսվել է 70,000.0 հազ. դրամ, որից՝ 40,000.0 հազ.

դրամը Երևանի ենթակայության երաժշտական դպրոցների համար գույքի և երաժշտական գործիքների ձեռք բերման համար, 20,000.0 հազ. դրամը՝ շախմատի դպրոցների համար գույքի ձեռք բերման և 30,000.0 հազ. դրամը՝ մարզադպրոցների սպորտային գույքի ձեռք բերման համար:

91. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 566,502.7 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված ցուցանիշից 5,469.0 հազ. դրամով պակաս, որից 550,000.0 հազ. դրամի շրջանակներում նախատեսվում է իրականացնել թվով 11 վարչական շրջանների նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում, իսկ 16,502.7 հազ. դրամի շրջանակներում՝ ընթացիկ նորոգում: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական լուծումը:

92. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 16,310.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված ցուցանիշից 6,610.0 հազ. դրամով ավել, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 21-րդ մարզական խաղերի կազմակերպում, «Ազգային Ժողովի գավաթի» կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հոբեյանական և մի շարք այլ միջոցառումներ:

93. Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 26,241.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

94. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 3,068.0 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված ցուցանիշից 496.0 հազ. դրամով ավել և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

95. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 30,065.5 հազ. դրամ՝ 2014 թվականի 30,390.0 հազ. դրամի դիմաց և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

96. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն, և հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրերով նախատեսվել է 567,117.8 հազ. դրամ՝ 2014 թվականի ճշտված ցուցանիշից 55,529.8 հազ. դրամով պակաս և հաշվարկված է հստակ ծրագրային մոտեցումներից, բնակչության առանձնացված խմբերի աջակցության միջոցառումներից ելնելով:

97. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 302,359.1 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

98. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 675,432.0 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

99. Առողջության ապահովագրություն ծրագրով նախատեսվել է 157,872.0 հազ. դրամ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, «Երևանտրանս» ՓԲԸ-ի վարորդների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, ինչպես նաև Երևան քաղաքի թատրոնների և թանգարանների, գրադարանների աշխատակիցների առողջության ապահովագրության համար: Առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափը (գումարը), յուրաքանչյուր աշխատակցի համար նախատեսվում է 52.0 հազ. դրամ: Առողջության ապահովագրության փաթեթի մեջ մտնող ծառայությունները կհամապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1691-Ն որոշման N 2 հավելվածի N 1.1 ձևում սահմանված և հաստատված առողջության ապահովագրության բազային փաթեթի չափորոշիչներին: 2014 թվականի համեմատ 2015 թվականին

առողջության ապահովագրության փաթեթ է տրվելու նաև Երևանի ենթակայության բոլոր գրադարանների աշխատակիցներին:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 250,000.0 հազ. դրամի չափով պակասուրդ, որը կֆինանսավորվի տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին: Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 400,000.0 հազ. դրամի չափով, որից 150,000.0 հազ. դրամը կուղղվի «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը՝ դիզելային վառելիքով շահագործվող ավտոբուսները բնական սեղմած գազի աստիճանական անցումն ապահովելու և կազմակերպության վերակազմակերպման գործընթացում առաջացած պարտքերի մարման նպատակով: Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2014 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Միաժամանակ 2014 թվականի բյուջետային տարվա ավարտին բյուջետային պարտքեր չեն նախատեսվում:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագիծը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն, 2014 թվականի հոկտեմբերի 31-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի քննարկմանը, որը 2014 թվականի նոյեմբերի 4-ին հրավիրված նիստում տվել է իր դրական եզրակացությունը այն հանրային քննարկման ներկայացնելու համար: 2014 թվականի նոյեմբերի 4-ից մինչև նոյեմբերի 18-ը Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագիծը մամուլով և Երևան քաղաքի պաշտոնական էլեկտրոնային կայքով ներկայացվել է հանրային քննարկման, իսկ 2014 թվականի նոյեմբերի 18-ին Երևանի քաղաքապետարանում հանրային քննարկումների արդյունքում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ տեղի են ունեցել հանրային բաց լսումներ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 21-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման և բաց լսումների արդյունքները: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է իր դրական եզրակացությունը Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագիծը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն 2014 թվականի նոյեմբերի 24-ին ներկայացվել է Երևանի ավագանու անդամներին, խմբակցություններին և համապատասխան հանձնաժողովներին: Երևանի ավագանու անդամների, խմբակցությունների և հանձնաժողովների կողմից սահմանված ժամկետում ներկայացված առաջարկությունների հիման վրա Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագիծը լրամշակվել է:

Այսպիսով, Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. Եկամուտների գծով՝ **71,870,838.3** հազ. դրամ,
2. Ճախսերի գծով՝ **72,120,838.3** հազ. դրամ,
3. դեֆիցիտը (պակասուրդը) **250,000.0** հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ԵՐԵՎԱՆԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկության և դիտողության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության և դիտողության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության 02.12.2014թ. N36/240 գրություն</p>	<p>Բարձրացնել մանկապարտեզների, գրադարանների, արվեստի դպրոցների, մշակույթի կենտրոնների, մարզադպրոցների, երաժշտական դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների աշխատողների աշխատավարձը 80%-ի չափով: Բարձրացումը առաջարկվում է իրականացնել բոլոր ծրագրերի հաշվին</p>	<p>Առաջարկը ողջունելի է, ընդ որում՝ բյուջետային գործընթացում քաղաքապետարանը նախնական հաշվարկներն իրականացրել է ինչպես աշխատավարձի ներկայացված բարձրացման մակարդակի, այնպես էլ կրկնակի բարձրացման շրջանակներում: Սակայն Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում ներառվել է բյուջեի հնարավորության շրջանակներում բարձրացումը: Միաժամանակ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն չի նշվել առաջարկի ֆինանսական միջոցների հստակ աղբյուրները:</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>
<p>Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն</p>	<p>ՆՈՒՀ-երի փոքր խմբերի դայակների հաստիքների թվի կրկնապատկում</p>	<p>Ընդհանուր առմամբ դեմ չլինելով առաջարկին հարկ է նշել, որ Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով մանկապարտեզների ֆինանսավորումը իրականացվում է փաստացի հաճախող երեխաների թվաքանակի հիման վրա սահմանված բանաձևով, հետևաբար առանձին դեպքերում բարձր խտություն ունեցող մանկապարտեզներում խնդիրը հնարավոր կլինի կարգավորել սահմանված կարգով ֆինանսավորման շրջանակներում՝ առանց Երևան քաղաքի բյուջեի փոփոխության, յուրաքանչյուր մանկապարտեզի եկամուտների և ծախսերի նախահաշվի շրջանակներում:</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>

<p>Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն</p>	<p>Հարավ-արևմտյան թաղամասում Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի տնօրինության «Կրթական պարտեզ» նախաձեռնության ֆինանսավորում</p>	<p>Առաջարկը ողջունելի է, սակայն հաշվի առնելով, որ չի ներկայացվել ծրագրի ֆինանսական գնահատականը, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն չի նշվել առաջարկի ֆինանսական միջոցների աղբյուրները, այն չի ընդգրկվել Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում, սակայն հնարավորինս միջոցներ կձեռնարկվեն այն մասնավոր-համայնք համագործակցության շրջանակներում լուծելու համար:</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>
<p>Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն</p>	<p>Կենտրոնի թիվ 15 ՆՈՒՀ-ի 2 խմբի համար գործունեության ֆինանսավորում</p>	<p>Առաջարկը քննարկվել է խմբակցության անդամների հետ, արդյունքում լրացուցիչ 2 խմբերի ֆինանսավորման չափով Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
<p>Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն</p>	<p>Շարուրի փողոցում մարզադաշտ և բարեկարգման աշխատանքներ</p>	<p>Շարուրի փողոցում բարեկարգման աշխատանքներն արդեն իսկ իրականացվել են, իսկ եթե հարցը վերաբերվում է Եղբայրության 22 հասցեին, ապա Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեով այնտեղ կիրականացվի մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է</p>
<p>Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն</p>	<p>Նազարբեկյան հ.31 շենքի և հարակից տարածքների բարեկարգում և կանաչապատում</p>	<p>Առաջարկն ընդունվել է և կիրականացվի Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով համապատասխան ծրագրի շրջանակներում:</p>	<p>Առաջարկն ընդունվել է</p>
<p>Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն</p>	<p>Կիևյան փողոցի հհ. 1, 3, 5 շենքերի բակերի բարեկարգում</p>	<p>Կիևյան փողոցի հ.1 և հ.5 շենքերում նախորդ տարիներին իրականացվել են բարեկարգման աշխատանքներ, իսկ Կիևյան 3 հասցեի շուկայի բակի բարեկարգման աշխատանքները չեն ընդգրկվել Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում, քանի որ չի ներկայացվել հարցի ֆինանսական գնահատականը և</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>

		բացակայում են նախագծանախահաշվային փաստաթղթերը:	
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պ. Սևակ մայրուղուց դեպի Սևակի 2-րդ շենք տանող 100մ փողոցի ասֆալտապատում	Առաջարկն ընդունվել է և կիրականացվի Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծի համապատասխան ծրագրի շրջանակներում:	Առաջարկն ընդունվել է
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Էրեբունի վարչական շրջանի մանկական պոլիկլինիկայի շենքի հիմնանորոգում	Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով 07 բաժնի 06 խմբի 01 դասի «1. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսված գումարների շրջանակներում տվյալ պոլիկլինիկայի շենքի հիմնանորոգման կամ մասնակի նորոգման հարցը կդիտարկվի ընդհանուր խնդրի համատեքստում՝ առաջնահերթության սկզբունքից ելնելով:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Ավարտին հասցնել Դավմայի այգիների ներկայիս սեփականատերերի կողմից նախկին հողօգտագործողներին դրամական փոխհատուցման գործընթացը	Հարցը չի վերաբերում Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի փոփոխությանը:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Անվտանգության ցանցով շրջափակել Երևանի բոլոր այն կամուրջների բաց կողերը, որտեղից մարդիկ ինքնասպան են լինում կամ ինքնասպանության փորձ են կատարում	Հաշվի առնելով, որ չի ներկայացվել հարցի ֆինանսական գնահատականը, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն չի նշվել առաջարկի ֆինանսական միջոցների աղբյուրները, չի ընդգրկվել Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Բարեկարգել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Զ. Սարկավազի հի. 127, 127/1, 129, 129/2 շենքերի բակային տարածքը	Հաշվի առնելով, որ բարեկարգվող տարածքի հիմնական մասը մասնավոր սեփականություն է, այն չի ընդգրկվել Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության	Նոր Նորքի Գայի արձանի դիմացի շատրվանների այգու բարեկարգում	Տարածքը հատկացված է Մայր Աթոռ սբ. Էջմիածնին և բարեկարգման խնդիրը պետք է դիտարկել	Փոփոխություն չի կատարվել

03.12.2014թ. N283/14 գրություն		սեփականատիրոջ իրավունքների շրջանակներում:	
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Սուրբ Երրորդություն եկեղեցու դիմացի Ռաֆֆու փողոցի բարեկարգում	Ռաֆֆու փողոցի հիմնանորոգման խնդիրը կքննարկվի Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի համապատասխան ծրագրերում՝ առաջնահերթության սկզբունքից ելնելով:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա. Բաբաջանյան փողոցի սկզբնամասի աջ և ձախ մասերում մայթերի վերականգնում՝ վերացնելով 1/1 հասցեում 1995 թվականից փորված փոսի կողքին, մայթի վրա ամրացված շինարարական, արդեն փտած տնակր:	Բարձրացված հարցն ըստ էության չի ենթադրում բյուջեի նախագծի փոփոխություն:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա. Բաբաջանյան փողոցի 18/3 հասցեի փոսի վերականգնում և բարեկարգում՝ փոսի հեղինակի ջանքերով	Բարձրացված հարցն ըստ էության չի ենթադրում բյուջեի նախագծի փոփոխություն:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Փողոցների խաչմերուկներում տեղադրված գործող լուսակիրները այնքան ցածր են դրված, որ հաճախ տեսանելի չեն վարորդներին, հատկապես երբ դիմացի մեքենան մեծ բեռնատար է կամ ծառերի սաղարթում են մնացել: Այս պատճառով երթևեկության անվտանգությունը չի ապահովվում և վարորդներն իրավացիորեն բողոքում են: Բազմաձև վարորդների կողմից առաջարկում ենք այդ լուսակիրների դիրքը բարձրացնել և ամրացնել	Բարձրացված հարցը դուրս է Երևան քաղաքի բյուջեով ֆինանսավորվող Երևանի քաղաքապետարանի գործառույթներից:	Փոփոխություն չի կատարվել

	փողոցների բանուկ ճակատային մասերում		
Երևանի ավագանու «Բարև Երևան» խմբակցության 03.12.2014թ. N283/14 գրություն	Ավարտին հասցնել ավագանու նիստի էլեկտրոնային քվեարկության մեխանիզմը	Հարցը չի ենթադրում բյուջեի նախագծի փոփոխություն:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության 14.11.2014թ. N 54/01-58 գրություն	Երևանի զարգացման 2015թ. ծրագրի նախագծում Երևան քաղաքի զարգացման ուղղությունների ապահովման նպատակով առաջնահերթ և գերակա են հայտարարվել 23 գերակա ուղղություններ, սակայն բյուջեի ծախսային հոդվածներից միայն երեքն են նշվել որպես 2015թ. գերակայություն /հիմք Երևանի քաղաքապետի 2015թ. բյուջետային ուղերձը/: Անհրաժեշտ է համապատասխանեցնել տարեկան ծրագրի և բյուջեի գերակայությունների ցանկը, ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել «գերակայությունների» սահմանման իրավական հիմքերն ու սկզբունքները, որը հիմք կհանդիսանա բյուջեի ծախսային հոդվածների ֆինանսավորման առաջնահերթության և դրանց հատկացվող գումարների չափի հիմնավորման համար	Երևանի զարգացման 2015թ. ծրագրի և Երևանի քաղաքապետի 2015թ. բյուջետային ուղերձում տեքստայի մասով թվարկված գերակայությունների քանակական տարբերությունները չեն ենթադրում, որ 2015թ. բյուջեի նախագծով մնացած գերակայությունների իրականացման համար ծախսեր նախատեսված չեն: Այդուհանդերձ «գերակայություն» բառի օգտագործումը նպատակ ունի առանձնացնել տվյալ ոլորտը և շեշտել նրա ավելի բարձր դիրք ունենալու կարևորությունը: Միաժամանակ գերակա խնդիրները առավելապես պետք է դիտարկել դրանց արդյունքային լուծման և ոչ տրամադրվող ֆինանսական միջոցների չափի տեսանկյունից, ինչը ընդգծվել է բյուջեի ուղերձում: Այդուհանդերձ թե ծրագրի և թե բյուջեի նախագծերում հստակ նշված են նախատեսվող ծրագրերն ու դրանց չափաքանակները:	Փոփոխություն չի կատարվել
Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան»	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բյուջեի եկամուտների կարևորագույն	Ընդհանուր առմամբ մոտեցումն ընդունելի է, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում	Փոփոխություն չի կատարվել

<p>խմբակցության 14.11.2014թ. N 54/01- 58 գրություն</p>	<p>հողվածներից է «Հարկեր և տուրքեր» հողվածը, որի օրենսդրական և իրավական բազան հանդիսացող՝ «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքները ընդունվել են դեռևս 1996-1997թթ, ուստի անհրաժեշտ է մինչև 2014թ. ավարտը ՀՀ ԱԺ ներկայացնել այդ օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնություններ և ձեռնարկել համապատասխան միջոցներ մինչև Երևանի ավագանու կողմից 2015թ. բյուջեի ընդունումը այդ օրենքների ընդունման համար: Միաժամանակ կարևոր է, որ Երևանի քաղաքապետի կողմից ներկայացվի առաջարկություն ՀՀ կառավարությանը՝ «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ ԱԺ ներկայացնելու համար</p>	<p>փոփոխություններ կատարելու մասին նախագիծը արդեն իսկ շրջանառության մեջ է, սակայն առաջարկված ժամկետում ՀՀ ԱԺ-ի կողմից դրանց ընդունումը իրատեսական չէ, հետևապես փոփոխվող դրույթների առումով դրանք 2015 թվականի բյուջեում նախատեսելը իրավաչափ չէ: «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ ԱԺ ներկայացնելու առաջարկը ընդունելի է:</p>	
<p>Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության 14.11.2014թ. N 54/01- 58 գրություն</p>	<p>Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2015թ. բյուջետային ուղերձը, կարելի է փաստել, որ 2015թ. բյուջեի հողվածների ֆինանսավորման ծրագրավորման համար հիմք են հանդիսացել 2013թ. համապատասխան հողվածների տարեկան փաստացի ցուցանիշները կամ 2014թ. ճշտված ցուցանիշները: Կարևոր է, որ նշված</p>	<p>Բյուջետային ծրագրավորման համար հիմք են հանդիսացել համապատասխան հաշվարկային ցուցանիշները, հաշվարկ-հիմնավորումները, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերը, իսկ նախորդ տարվա փաստացի և ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշների համեմատական վերլուծությունը ներկայացվել է 2015 թվականի բյուջետային ուղերձում «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>

	<p>հողվածներով նախատեսված գումարների հիմնավորման համար հիմք ընդունվեն վերոնշյալ 2 ցուցանիշները միաժամանակ, որն ավելի օբյեկտիվ հիմք կհանդիսանա նախատեսված ֆինանսավորման համար</p>		
<p>Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության 14.11.2014թ. N 54/01-58 գրություն</p>	<p>Առաջարկվում է վերանայել և ավելացնել ներքոնշյալ մի շարք ծախսային հողվածներով նախատեսված գումարների չափը, մասնավորապես՝ «Վերելակների հիմնանորոգում» ծրագրով նախատեսված 98,392.1 հազ. դրամը, և «Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում» ծրագրով նախատեսված 40,000.0 հազ. դրամը</p>	<p>«Վերելակների հիմնանորոգում» ծրագրով նախատեսված 98,332.1 հազ. դրամը օգտագործվելու է միայն նորոգման խիստ անհրաժեշտ և առանջնահերթ աշխատանքների իրականացման համար, իսկ այս հիմնախնդրի ամբողջական և արդյունավետ լուծումը Երևանի քաղաքապետարանը դիտարկում է պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ ներդրումային ծրագրերի իրականացման համատեքստում: Մայրաքաղաքի փողոցների և բակային տարածքների լուսավորության ծածկույթը արդեն կազմում է 90 և ավել տոկոս: «Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում» ծրագրով նախատեսված 40,000.0 հազ դրամը ուղղվելու է դեռևս չլուսավորվող առաջնահերթ փողոցներում լուսավորության ցանցի հիմնանորոգմանը և այդ փողոցներում լուսավորության ծածկույթի ապահովմանը: Այս ծրագրի գծով նույնպես ինչպես չլուսավորվող հատվածների, այնպես էլ առկա լուսավորության համակարգի արդիականացման հիմնախնդիրները նախատեսվում են լուծել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում՝ ներգրավելով խոշոր դրամաշնորհային միջոցներ: Հետևաբար այս ծրագրի գծով Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>

<p>Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության 03.12.14թ. N 54/01-70 գրություն</p>	<p>Դժվարամատչելի հետազոտությունների իրականացման ծրագրով հատկացվող գումարի չափը նախատեսել 2014 թվականին հատկացված 15,000.0 հազար դրամից ոչ պակաս: Ցանկալի է այս հոդվածին հատկացվող գումարները հնարավորինս ավելացնել:</p>	<p>փոփոխություններ կատարելը նպատակահարմար չէ: Նշված ծրագրով գումարները նախատեսվել են հաշվի առնելով 2014 թվականի փաստացի կատարողական ցուցանիշներն ու սոցիալական խոցելի խմբերի կողմից ներկայացված պահանջարկը, և նախատեսված գումարների ավելացումը բյուջետավորման տեսանկյունից հիմնավորված չէ:</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>
<p>Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության 03.12.14թ. N 54/01-70 գրություն</p>	<p>Երևան քաղաքի ենթակայության գրադարանների աշխատողների աշխատավարձերի բարձրացման համար հատկացնել 122,549.3 հազար դրամ, որը կապահովի նշված աշխատողների աշխատավարձերի շուրջ 30% բարձրացում</p>	<p>Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով նախատեսված Երևանի ենթակայության գրադարանների աշխատողների աշխատավարձերի աճը ավելին բարձրացնելու առաջարկը ողջունելի է, ընդ որում՝ բյուջետային գործընթացում քաղաքապետարանը նախնական հաշվարկներն իրականացրել է ինչպես աշխատավարձի ներկայացված բարձրացման մակարդակի, այնպես էլ կրկնակի բարձրացման շրջանակներում: Սակայն Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում ներառվել է բյուջեի հնարավորության շրջանակներում բարձրացումը, որն իդեպ կազմում է շուրջ 27%, իսկ մնացած բարձրացումները նախատեսվում է իրականացնել աստիճանաբար՝ ըստ հնարավորությունների: Միաժամանակ Երևանի ենթակայության գրադարանների աշխատողների սոցիալական աջակցության նպատակով Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է նրանց ապահովել առողջության ապահովագրության փաթեթներով: Ինչ վերաբերում է ցանկալի բարձրացման համար առաջարկվող ֆինանսավորման աղբյուրին, ապա դրա վերաբերյալ եզրակացությունը ներկայացված է առաջարկին համապատասխան տողում:</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>

<p>Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության 03.12.14թ. N 54/01-70 գրություն</p>	<p>Երևանի քաղաքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատողների աշխատավարձերի բարձրացման համար հատկացնել 1,501,383 հազար դրամ, որը կապահովի նշված աշխատողների աշխատավարձերի շուրջ 25-30% բարձրացում</p>	<p>Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծով նախատեսված Երևանի ենթակայության մանկապարտեզների աշխատողների աշխատավարձերի աճը ավելին բարձրացնելու առաջարկը ողջունելի է, ընդ որում՝ բյուջետային գործընթացում քաղաքապետարանը նախնական հաշվարկներն իրականացրել է ինչպես առաջարկված բարձրացման, այնպես էլ կրկնակի բարձրացման շրջանակներում: Սակայն Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեի նախագծում երեխա-թիվ ֆինանսավորման բանաձևի ելակետում ներառվել է բյուջեի հնարավորության շրջանակներում բարձրացումը, որն իդեպ միջինացված կազմում է շուրջ 25%, իսկ հաջորդական բարձրացումները նախատեսվում է իրականացնել աստիճանաբար՝ ըստ հնարավորությունների: Ինչ վերաբերվում է ցանկալի բարձրացման համար առաջարկվող ֆինանսավորման աղբյուրին, ապա դրա վերաբերյալ եզրակացությունը ներկայացված է առաջարկին համապատասխան տողում:</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>
<p>Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության 03.12.14թ. N 54/01-70 գրություն</p>	<p>Նվազեցնել պարգևատրման ֆոնդին հատկացվող գումարի չափը և այն ուղղորդել գրադարանների և մանկապարտեզների աշխատողների աշխատավարձերի բարձրացման ապահովմանը</p>	<p>Կառավարման մարմնի պահպանում ծրագրով նախատեսված Երևանի քաղաքապետարանի աշխատողների խրախուսման համար նախատեսվող պարգևատրման ֆոնդի հաշվարկներում հիմք է ընդունվել նույնանման ծառայություն իրականացնող «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց մասին» ՀՀ օրենքով նախատեսված աշխատողների համար սահմանված պարգևատրման սկզբունքները, ընդ որում՝ որոշակի ավելի ցածր տրամաբանությամբ: Մասնավորապես, բացի հատուկ առաջադրանքների և որակյալ աշխատանքի համար պարգևատրումներից, պետական ծառայողը պարգևատրվում է տարեկան 2</p>	<p>Փոփոխություն չի կատարվել</p>

		<p>անգամ, ինչպես նաև բացի հիմնական արձակուրդային վճարից, վճարվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին աշխատավարձի չափով, ընդ որում՝ վճարումներն իրականացվում են ինչպես օրենքով սահմանված աշխատավարձի 10%-ի չափով սահմանված պարգևատրման ֆոնդի, այնպես էլ համապատասխան հաշվարկներով նախատեսված աշխատավարձի ֆոնդի տնտեսման և այլ ֆոնդերի հաշվին:</p> <p>Ի տարբերություն վերը նշվածի, Երևանի քաղաքապետարանի աշխատողների համար նախատեսվում է մեկանգամյա ընդհանուր պարգևատրում (ինչը թերևս համարժեք է լրացուցիչ արձակուրդային վճարին), ինչպես նաև որոշ աշխատողներին տարվա ընթացքում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետի համաձայն ծառայողական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները որակյալ կատարելու համար միանվագ դրամական պարգևատրում: Ընդ որում՝ Երևան համայնքի բյուջեով պարգևատրումները վճարվում են բացառապես պարգևատրման ֆոնդից՝ ի տարբերություն վերը նշվածի: Հետևաբար ինչպես համեմատական առումով, այնպես էլ նորմատիվաիրավական առումով չկան որևէ հիմքեր նախատեսված ֆոնդը նվազեցնելու կամ հանելու համար:</p>	
--	--	---	--

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ